Արձանագրություն N 2

ՀՀ ՖՆ կարիքների համար կազմակերպված ՀՀ ՖՆ-ԷԱՃԾՁԲ-25/3 ծածկագրով էլեկտրոնային աճուրդով գնումներ կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ հայտերի բացման և գնահատման նիստի

Մասնակցում են՝

Հանձնաժողովի նախագահ՝

Ա.Ասրյան - ֆինանսների նախարարության քարտուղարության պետ.

Հանձնաժողովի անդամներ՝

Դ.Պետրոսյան- ֆինանսների նախարարության քարտուղարության փաստաթղթաշրջանառության բաժնի պետ.

Ն.Առաքելյան - ֆինանսների նախարարության քարտուղարության փաստաթղթաշրջանառության բաժնի գլխավոր մասնագետ.

Մ.Մինասյան- ֆինանսների նախարարության քարտուղարության փաստաթղթերի հսկողության և արձանագրային բաժնի գլխավոր մասնագետ

Գնումները համակարգող

Գ.Սիմոնյան՝ ֆինանսների նախարարության կառավարչական հարցերի կազմակերպման վարչության գնումների բաժնի մասնագետ

1. Տեղեկություններ մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից ներկայացված հիմնավորումների վերաբերյալ

Համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետի մինչև հրավերում փոփոխությունների կատարման համար սահմանված վերջնաժամկետը լրանալը, էլեկտրոնային փոստի միջոցով գնահատող հանձնաժողովի քարտուղարին չի ներկայացվել հիմնավորումներ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից:

2. <u>Տեղեկություններ հայտերի բացման մասին</u>

Հայտերի բացումը տեղի է ունեցել www.eauction.armeps.am կայքի միջոցով՝ հակադարձ աճուրդի օրը՝ 21.11.2025թ.-ին ժամը 14:30-ին:

3. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և գտնվելու վայրերի հասցեների մասին

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված «ՀՀ ՖՆ-ԷԱՃԾՁԲ-25/3» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

Մասնակցի անվանումը	Տվյալները
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԽԻՎ» ՊՈԱԿ	ՀՎՀՀ՝ 00078217, հասցե՝ Հր. Քոչար 5/2, էլ հասցե՝ tender@keystone.am, հեռ.՝ (+374) 10225355
«ԳԱԼՈՅԱՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ	ՀՎՀՀ՝ 00533764, հասցե՝ երևան, էրեբունի, այվազովսկու փ., 86/2,, էլ հասցե՝infogaloyanlaw@gmail.com, հեռ.՝ 077178057,

4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը

«ՀՀ ՖՆ-ԷԱՃԾՁԲ-25/3» ծածկագրով ընթացակարգի մասնակիցների կողմից առաջարկված գներն են՝

Հ/Հ	ՄԱՍՆԱԿՑԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԳՆՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՊՐԱՆՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Պայմանագրի կատարման համար առաջարկվող գները					
			Նախնական առաջարկ			Վերջին առաջարկ		
			Արժեք (ՀՀ դրամ)	ԱԱՀ (%)	Ընդհանուր գին (ՀՀ դրամ)	Արժեք (ՀՀ դրամ)	ԱԱՀ (%)	Ընդհանուր գին (ՀՀ դրամ)
1	ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԽԻՎ ՊՈԱԿ	արխիվացման ծառայություններ /նախահաշվային գինը՝ *1,440,000* ՀՀ դրամ /	1,200,000	20	1,440,000	900,000	20	1,080,000
1	«ԳԱԼՈՅԱՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ	արխիվացման ծառայություններ /նախահաշվային գինը՝ 1,440,000 ՀՀ դրամ /	1,438,000	20	1,725,600	1,116,000	20	1,339,200

5. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին

Հանձնաժողովն ընդունեց ի գիտություն, որ՝

1. Հաշվի առնելով, որ բացառությամբ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի մյուս մասնակիցների հայտերը մերժվում են՝ հանձնաժողովի կողմից գնահատվել է միայն առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԽԻՎ» ՊՈԱԿ-ի ներկայացված հայտը:

2. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԽԻՎ» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում առկա են հետևյալ անհամապատասխանությունները.

1)դիմում-հայտարարությունում բացակայում է մասնակցի ամբողջական հասցեն.

2) բացակայում է հրավերում ներառված թիվ 2 հավելվածը, ինչը պայմանագրի նախագծի 4.2 կետի համաձայն անհրաժեշտ է կնքվելիք պայմանագրի շրջանակում վճարում կատարելու համար,.

6. Հանձնաժողովի կայացրած որոշումները

Հանձնաժողովը որոշեց

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի պահանջը՝ մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը, հնարավորություն տալով մասնակցին մինչև կասեցման ժամկետի ավարտը /24.11.2025թ. ժամը 24:00/ շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

7. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը

«ՀՀ ՖՆ-ԷԱՃԾՁԲ-25/3» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ հայտերի գնահատման նիստը վերսկսել սույն թվականի նոյեմբերի 25-ին ժամը 12:00-ին՝ ՀՀ ֆինանսների նախարարության վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Մ. Ադամյան 1:

Ընդունվել է որոշում՝ կողմ–4, դեմ –0

Գնահատող հանձնաժողովի նիստը վերսկսեց 25.11.2025թ.

Մասնակցում են՝

Հանձնաժողովի նախագահ՝

Ա.Ասրյան - ֆինանսների նախարարության քարտուղարության պետ.

Հանձնաժողովի անդամներ՝

Դ.Պետրոսյան- ֆինանսների նախարարության քարտուղարության փաստաթղթաշրջանառության բաժնի պետ.

Ն.Առաքելյան - ֆինանսների նախարարության քարտուղարության փաստաթղթաշրջանառության բաժնի գլխավոր մասնագետ.

Մ.Մինասյան- ֆինանսների նախարարության քարտուղարության փաստաթղթերի հսկողության և արձանագրային բաժնի գլխավոր մասնագետ

Գնումները համակարգող

Գ.Սիմոնյան՝ ֆինանսների նախարարության կառավարչական հարցերի կազմակերպման վարչության գնումների բաժնի մասնագետ

8. Հանձնաժողովի արձանագրումը.

Հանձնաժողովը արձանագրեց,որ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԽԻՎ» ՊՈԱԿ-ը սահմանված ժամկետում շտկել է հայտում առկա անհամապատասխանությունները:

9. Հանձնաժողովի կայացրած որոշումները

Հանձնաժողովը որոշեց.

1. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԽԻՎ» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել բավարար:
2. Ընթացակարգի հաղթող (ընտրված) մասնակից ճանաչել «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԽԻՎ» ՊՈԱԿ-ին:

10. Պայմանագիր կնքելու որոշման մասին

Հաղթող մասնակցի հետ գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն կկնքվի պայմանագիր:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ – 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ _____ **Ա.Ասրյան**

Գնահատող հանձնաժողովի անդամներ՝ _____ **Դ.Պետրոսյան**

_____ **Ն.Առաքելյան**

_____ **Մ.Մինասյան**

Գնումները համակարգող՝ _____ **Գ.Սիմոնյան**